ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
12	Տեքստուորլդ ՍՊԸ	Տեքստուորլդ ՍՊԸ	Կոստյում՝ ամենօրյա ԱԱԾ (Կոստյում՝ կիսաբրդյա, ամենօրյա ԱԱԾ) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի 235 գրամ մակերեսային խտությամբ, 44% բուրդ, 54% պոլիէսթեր և 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից (ըստ նմուշի): Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոն: Բաճկոնը՝ միալանջ, թիկունքամասը՝ ծավալուն, կոճկվում է կենտրոնական շղթայական կոճկվածքով՝ երկկողմանի կայծակ շղթայով: Կենտրոնական շղթայի (տրակտոր տեսակի, խոշոր ատամնավոր № 5 կամ 6) վրայից երկայնակի 5.5-6.0 սմ լայնության կափույրով, որը կայծակ շղթաի վրայից կոճկվում է փակ, գաղտնի կոճկվածքով 4 հատ կոճգամով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ

			երկայնքով մշակվում է աստառը՝ ԳOUS-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100% վիսկոզա: Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14.5-15.0 սմ լայնության և 16-17 սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5.0-5.5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են կոճկվում են 2.5×2.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններով, իսկ գրպաների կողերը դեպի կենտրոնական շղթա գաղտնի ներկարված են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18.0-18.5 սմ բացվածքով, 1.5-2.0 սմ լայնության շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են կանաչ երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Բաճկոնի կողամասերում՝ ներքևի գրպաների վերին եզրին զուգահեռ բարձրության վրա, մշակվում են երկու կոճակով կարգավորվող զույգ պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններ կրծքանշանների փակցման համար: Թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում են սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ կամ մեռու գործվածքով (merrow) ՀՀ զինանշանը (վահանը համապատասխան եռագույն գունավորմամբ) և ՀՀ ԱԱԾ խորհրդանշանը (ՀՀ դրոշը համապատասխան եռագույն գունավորմամբ): Թևքերի ներքևի եզրերը կոճկվում են զույգ կոճգամներով: Բազկակալի լայնությունը՝ 6.5-7.5 սմ: Ինքնակպչուններով ամրացվող ասեղնագործ կամ մեռու գործվածքով

			կրծքանշանների, տարբերանշանների նմուշները և քանակները կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, հաստատման համար ներկայացված նմուշների հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Տաբատ: Ազատաթող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից է: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով՝ 5.5-6.0 սմ լայնության,որը կոճկվում է 2.5×2.5 սմ չափսերի կանաչ երանգի կպչուն ժապավեններով: Գուլֆիկը մշակվում է նեյլոնե կայծակ շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 4.0-4.5 սմ լայնությամբ, վրան մշակված են 7 կամ 8 հատ 5.0 սմ երկարության կամրջակներ, որոնցից մեկը հետևամասի կարի վրա: Կողային կարերում անցկացվում է 1.5-2.0 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կապույտ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում՝ մինչև ծնկների նեքին հատվածը, մշակվում է ԳՕՍՏ-20272-2014 8-C5-ԲՇ արտիկուլի մուգ կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100 % վիսկոզա: Պիտակավորումը: Բաճկոնի ծոցագրպանին և տաբատի գոտու ներսի մասին պետք է կարված լինի պիտակ կամ պիտակներ: Պիտակի (պիտակների) վրա նշված՝ տեսականու չափսը, ապրանքի անվանումը, խնամքի վերաբերյալ գրառումներ և սիմվոլներ, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և մրցույթի համարը: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա պետք է կախված լինի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը, մրցույթի համարը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
12			